


Մ. ՄԱՄԻԿՈՂՅԱՆ

ՏԻԶԵՐԸ

ՅԵՎ.

ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԻ ԳՈՂԵՐՈՑԲԸ

(ՊԵՐՈՊԱԶՄՈՉ)



619

Մ-22

8659

21 JUN 2013

30 JUL 2010

619
5-22
my'

Մ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

1006
28653

2858

Տ Ի Զ Ե Ր Ը

Ե Ե Վ

ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴՐԱՆԻՆԵՐԻ ԳՈՂԵՐՈՑԲԸ

(ԳԻՐՈՊՈՋՄՈՁ)

Կ Յ Ո Ւ Գ Զ Ր Ա Տ

1984

Յ Ե Ր Ե Վ Ա Ն



Գատ. խմբագիր՝ Ե. Ռեմյոն
 Մասնագիտ. խմբագիր՝ Ռ. Արմենյան
 Տնխ. խմբագիր՝ Ո. Հակոբյան
 Մրրագրիչ՝ Ե. Այվազյան
 Հանձնվել է արտատրության 1934 թ. մարտի 22-ին.
 Մտորագրվել է տպագրելու 1934 թ. մարտի 29-ին.
 Դրավիտ № 230 Տիրած 3000 Գատվեր № 237

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈՒԱՐԵՆ

Կուսակցության 17-րդ համագումարում ընկ. ՄՏԱԼԻՆԸ՝ նշելով վզուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ուղղությամբ ձեռք բերված խոշոր նվաճումները և անդրադառնալով անասնաբուծության խնդրին, շեղտեց, վոր՝

«Անասունների քանակի ասպարիդում հաշվետու ժամանակաշրջանում մենք ունենք վոչ թե վերելք, այլ դեռևս շարունակվող անկում՝ նախապատերազմյան մեկարդակի համեմատությամբ»:

Սորհրդային Հայաստանում ևս մենք ունենք անասունների քանակի անկում, վորի սպառնալից վե՛նակի մասին խոսեց ընկ. ԽԱՆՋՅԱՆԸ՝ Հայկոմկուսի (բ) 9-րդ համագումարում:

Կուսակցության պողպատյա առաջնորդ ընկ. ՄՏԱԼԻՆԸ խնդիր դրեց, վոր 1934 թիվը անասնաբուծության զարգացման տեսակետից պետք է դառնա բեկման տարի, իսկ զրա համար «Անասնաբուծության գործն էրենց ձեռքը պետք է վերցնեն ամբողջ կուսակցությունը և մեր բո՛լոր կուսակցական ու անկուսակցական աշխատողները» (ՄՏԱԼԻՆ),

Առաջնորդի այս ցուցումներն աշխատանքի մար-

տական ծրագիր և ուղեցույց են հանդիսանում անասնաբուծութեան զարգացման գործի կազմակերպման համար:

Անասնաբուծութեան զարգացման խոչնդոտներից մեկն էլ հանդիսանում է ընտանի կենդանիների պիրուպլազմոզ—անասունների մալարիա (դոդերոցք)՝ վարակիչ հիվանդութիւնը, վորը տեղական բնույթ է կրում և ամեն տարի զգալի թվով անասուններ է զոհ տանում:

Մինչև այժմ մեր կոլտնտեսական մասսաներն ու աշխատավոր գյուղացիութիւնը ծանոթ չեն այս հիվանդութեան ելութեանը և նրա դեմ պայքարի կոնկրետ միջոցներին: Ընկ. Մ. Մամիկոնյանի այս գրքույկը հանրամատչելի ձևով բացատրում է այդ հիվանդութեան ելութիւնը, նրա տարածման պատճառները և նրա դեմ պայքարի կոնկրետ միջոցառումները:

Մեր կոլտնտեսական ու աշխատավոր գյուղացիական մասսաները՝ կարգալով ընկ. Մ. Մամիկոնյանի այս գրքույկը, կզինվեն անասնաբուծական այս անհրաժեշտ գիտելիքով, իսկ այդ մեծ չափով կնպաստի մեր սոցիալիստական անասնաբուծութեան զարգացմանը:

ԳՅՈՒՆՆԻ ԳՂԲՄՏ

Բնագետի կենդանիների դոդերոցքը (պիրուպլոզ)


Ինչպես հայտնի յե, մարդիկ վարակվում են դոդերոցքով (տենդով)՝ մոծակների միջոցով: Կենդանիների դոդերոցքն առաջ է գալիս վոչ թե մոծակների, այլ մեզ բոլորիս հայտնի տիզերի (գյանաների) միջոցով:

Տիզերն ապրում են ամեն տեղ, թե դաշտավայրերում և թե լեռներում: Տարվա նպաստովոր ամիսներին (վաղ գարնանից մինչև աշնան վերջը) նրանք բարձրանալով կենդանիների վրա՝ սնվում են նրանց արյունով, իբրև պարազիտներ, այսինքն՝ ապրում են կենդանիների հաշվին:

Գոդերոցքն ուրեմն արյան հիվանդութիւն է և զանազան վայրերում նրան տալիս են տարբեր անուններ, որինակ՝ «տենդ», «չիխիր», «կզղրմա» և այլն: Գոդերոցքով հիվանդանում են համարյա թե բոլոր ընտանի կենդանիները,—խոշոր ու մանր յեղջերավոր անասունները, ձին, եղջ, շունը և այլն: Այդ հիվանդութեանից ազատ չեն և վայրի կենդանիները: Յուրաքանչյուր տեսակի կենդանի ունի իր առանձնահատուկ դոդերոցքի տեսակները: Հիվանդութիւնն անմիջապես մի կենդանուց մյուսին չի անցնում: Վարակումը և

նրա տարածումն առաջ են բերում միմիայն տիզերը, յերբ վոր նրանք բարձրանում են կենդանու վրա և ձժում նրա արյունը: Հիվանդացած կաթնասուն կենդանիները պակսեցնում են սված կաթի քանակը, մյուսները՝ նիհարում, իսկ մատղաշներն ել դանդաղ մեծանում ու զարգանում:

Առաջներում կարծում էին, վոր նման հիվանդություններն առաջ են գալիս թունավոր խոտեր ուտելուց և վատ ջուր խմելուց, բայց ներկայումս պարզված է, վոր այդ հիվանդությունների պատճառը միմիայն տիզերն են: Յեթի այդպիսի հիվանդ կենդանու արյունը քննենք մանրադիտակի (միկրոսկոպի) միջոցով, նրա արյան կարմիր գնդիկներն մեջ կանանենք տանձաձև պիրոպլազմներ (միարջիչներ): Հիվանդի արյան գույնը մուգ կարմրագույնից փոխվում է բաց



Նկ. 1. ա) առողջ կենդանու արյունը բ) պիրոպլազմոզով հիվանդ կենդանու արյունը
կարմրագույնի, ջրիկանում ու դժվար է լիքդանում:
Այդ պիրոպլազմները սնվում են կենդանու արյունով, թունավորում են նրան, առաջ են բերում ար-

յան պակասություն, դեղնություն և այլն: Յեթի հիվանդի տիզերի արյունը սրակվի նման առողջ կենդանու, կարող է վերջինս հիվանդանալ նույնպիսի գոդերոցքով:

Տիզերի հասցրած ֆեսը մեր անասնապահությունը տալիս է խոշոր կորուստներ:


Յերկրագնդի հարավային տաք շրջաններում նըրանք ավելի շատ են տարածված և՛ բազմատեսակ են, քան հյուսիսային շրջաններում. այդ իսկ պատճառով, պարզ է, վոր անասունների պիրոպլազմները Հայաստանում ավելի շատ են և ավելի վտանգավոր, քան հյուսիսային յերկրներում:

Հայտնի չէ, վոր բնության մեջ յուրաքանչյուր միջառ բազմանում է տարվա վորոշ ժամանակաշրջանում, նույնը վերաբերում է նայել տիզերին: Այստեղ խոսքը վերաբերում է առանձնապես այն տիզերին, վորոնք ապրում են զաշտերում, արոտավայրերում: Այդ տիզերի տարածման դործում պակաս դեր չի խաղում նայել վոչխարաբուծական անտեսությունների քոչվորական կյանքը:

Տիզերի մի ուրիշ տեսակն ապրում է բնակարաններում, գոմերում, հավանոցներում, սրանք կոչվում են բնակարանային տիզեր:

Դաշտային տիզերը վաղ դարնանից բարձրանում են դաշտերում արածող ու ապրող կենդանիների վրայել սնվում նրանց արյունով: Նրանց կարելի չէ գրանել ձիու, չնդան, էջի, գոմշի, ուղտի, վոչխարի, այծի, շան, խոզի, հավերի, մողեսի, կրիայի, մկների և այլ կենդանիների վրա, նույնիսկ մարդու վրա: Տիզերի գարնան զարգացման այդ շրջանը պիտք է համարել:

նրանց կյանքի ամենակարևոր շրջաններէց մեկը: Կենդանու մարմնին կողելու համար, տիզը փնտուում է այնպիսի հարմար տեղ, վորտեղից կենդանուն դժվար է լինում նրան պոկել, քորելու միջոցով: Կզած գրության մեջ նրանք մնում են 5-6 օր և ծծած արյան պատճառով՝ խոշորանում՝ ուռչում, վորից հետո միայն վայր են ընկնում: Արու տիզն ափելի փոքր է լինում, քան



Նկ. № 2. Արու և եգ տիզեր

եզը և նրա չափ չի ուռչում արյունով: Եգ տիզը՝ պատրասարվելով գեանի վրա մի հարձար տեղում, սծում է հազարավոր ձվեկներ, վորից հետո ինքը մեռնում և Նայած շրջապատի պայմաններին, տարվա յեղանակին, ջերմության աստիճանին, յերկու յերեք շաբաթից հետո ձվեկներէց սկսում են դուրս գալ մանր թրթուռներ:

Մրանք կպչելով մի վորեւ կենդանու՝ սնվում են նրա արյունով, կերպարանափոխվում և դառնում հաբանուկ (նիմֆա). վերջինս իր հերթին նույնպես կերպարանափոխվում և դառնում է հասունացած տիզ: Ուրիշ խոս ում, ինչպես շերտի ձվեկներից նախ վար-

դանում է թրթուռը, հարսնուկը և հետո թիթեռը, նույն ձևով էլ տեղի յե ունենում տիզերի զարգացումը: Տարբերությունն այն է, վոր փոխանակ թիթեռնիկի՝ այստեղ առաջ են գալիս տիզեր: Հասունացած տիզն ունի գլուխ, մարմին, փորիկ և չորս գույգ վոտ: Դրսից մարմինը պատած է թաղանթով, վորը կոչվում խիտին: Արու տիզերի ամբողջ մեջքը, իսկ եզերի մեջքի առաջի մասը բերանի կնճիթի ուղղությամբ, պատած է ամուր և փայլուն վահանով: Մարմնի առաջի մասում, մեջքի վահանի կողքերում գտնվում են աչքեր. տիզի մի քանի տեսակներն աչքեր էլ չունեն: Տիզերն իրրեւ պարագիտներ, այսինքն՝ ուրիշի հաշվին ապոողներ, շատ լավ զարգացած կնճիթ ունեն. այս վերջինը ծածկված է կեռիկներով (չանգալներով), վորի միջոցով տիզն ամուր կոչում է կենդանու մարմնին և դժվար է լինում նրան պոկելը: Չորրորդ գույգ վոտերի հետևում, մարմնի կողքերին, գտնվում են շնչառության գործարանները. փորի վրա՝ առաջի մասում բերանի մոտ գտնվում է սեռական գործարանը, իսկ հետեվի մասում՝ ավելի ցած գտնվում է հետույքը:

Յուրաքանչյուր վարակիչ հիվանդություն վարակումից սննիջապես հետո յերևան չի գալիս՝ չի հայտարարվում, բայց նա միաժամանակ զարգանում է կենդանու որդանիզի մեջ ծածուկ կերպով, վորից հետո միայն նկատելի յեն դառնում հիվանդության առաջին նշանները: Այդ ժամանակաշրջանը, վորը տարրեր և տարրեր հիվանդությունների համար, անվանվում է գաղտնի շրջան (ինկուբացիոն շրջան):

Պիրոպլազմոզի գաղտնի շրջանը տևում է 8—12 օր, յերբմին էլ 15—20 օր, վորից հետո նկատվում են

հիվանդութեան նշանները: Ուրեմն պետք է նկատի ունենալ, վոր կենդանին կարող է հիվանդացած լինել, բայց նրա վրա տիգեր չլինեն. դա ցույց է տալիս, վոր տիգերն արդեն վարակել են և վայր են ընկել:

Մեր ընտանի կենդանիներից ավելի հոճախ դոշերոցքով հիվանդանում են խոշոր ու մանր յեղջերավոր անասունները և ձիերը: Հիվանդը դառնում է դանդաղկոտ՝ տխուր, շատ շուտ հոգնում է իր սովորական աշխատանքի ժամանակ, աստիճանաբար դադարում է ուտելուց և վորոճալուց, բարձրանում է տաքությունը մինչև 41 աստիճան և ավելի: Անասունը խիստ նիհարում է, շնչառությունը և յերակի գարկն արագանում են: Յերբեմն ել շնչառությունը ծանրանում է. հաճախ սկզբում փորը լուծում է, հետո կապնվում: Կղկղանքը ծածկված է լինում լորձով և յերբեմն է երդացած արյան բծերով: Անասունը հաճախակի պառչկում է ու տնքում: Կովերը դադարում են կաթ տալուց, յերբեմն ել հորթատում են: Աչքի, բերանի, շնդերի և քթի թաղանթները գունատվում են և դեղնում: Յերբեմն ել կենդանին արյուն է միզում: Հիվանդի այդ դրությունը տևում է 5—10 օր: Հիվանդությունը վերջնականապես պարզելու համար, անհրաժեշտ է արյունը քննել մանրադիտակի միջոցով, վորպեսզի ստույգ կերպով կարելի լինի հայտնաբերել հիվանդությունն առաջ բերող պիրոպլազմը: Դրա համար արյունն ընդհանրապես վերցնում են ականջից:

Հիվանդ կենդանու դրությունն ավելի յե վատթարանում, յերբ նա շարունակում է աշխատել: Մեր և լղար, ինչպես նայել աղնվացեղ կենդանիները շատ անգամ չեն դիմանում հիվանդութեան և հաճախ սատկում են դողերոցքից:

Հիվանդութունից նոր առողջացած, բայց գոհ չկազդուրված կենդանուն աշխատեցնելը խիստ անպրադառնում է նրա առողջութեան վրա. այդ դեպքում հիվանդությունը հաճախ կրկնվում է և շատ անգամ կենդանին սատկում է:

Յերբ նկատվում է, վոր կենդանին իրեն լավ չի զգում, պետք է անմիջապես նրան մեկուսացնել առողջ կենդանիներից: Չպետք է կարծել, վոր հիվանդին պետք է բուժել միայն դեղորայքով, այլ անհրաժեշտ է ուրիշ միջոցներ ևս գործադրել, վորոնք կարող են ավելի կարևոր դեր խաղալ կենդանու առողջացման գործում: Այդ միջոցները հետևյալներն են.

Հիվանդ կենդանիների գոմը պետք է լինի մաքուր, չոր, առանց միջանցիկ քամիների և հով: Հիվանդին պետք է տալ թեթև կեր, մաքուր ջուր, վորքան հիվանդը ցանկանա: Պետք է խուսափել հատկապես կերից և հացից:

Այս հիվանդութեան բուժումը բավական բարդ է և դժվարին: Այս դեպքում շատ բան է կախված հիվանդին խնամողից: Հիվանդի դրությունը մեղմացնելու համար՝ պետք է նրան ազատել աշխատանքից, հավաքել նրա վրայից տիգերը և վոչնչացնել, հով յեղանակին դուրս բերել մաքուր սղի մեջ, պաշտպանել ցըրտից, խոնավությունից և արևի ճառագայթների անմիջական ազդեցությունից:

Տաքությունն իջեցնելու յեվ մարսողութեան դործարանները մաքրելու համար, ցանկալի յե անել սառը կլիզմա: Այդ նպատակի համար պետք է վերցնել սովորական ջուր՝ 3—4 լիտր, սենյակի կամ արևի տակ յեղած ջերմաստիճանով, ռեզինի խողովակ՝ մի մա-

վա հաստութեամբ, 1 -1¹/₂ մետր յերկարութեամբ և ձապար Բեզինե խողովակի մի ծայրն անց կացնել ձապարին, իսկ մյուս ծայրը՝ կենդանու հետուքը—ուզից աղիքը, ապա ջուրը լցնել ձապարի մեջ: Այս գործողութիւնը ցանկալի յի կատարել որովա մեջ մի քանի անգամ:

Ինչ վերաբերում է հատուկ բուժման, դրա համար պետք է զիմնել անասնաբուժին կամ բուժակին: Նախ քան նրանց գալը, պետք է գործադրել հետեւյալ գեղորայքը. կամֆորի յուղ՝ 3—4 գրամ, որական 3 անգամ. գլաուբերջան աղ (լուծողական)՝ 400—500 գրամ. հիլմանդ վոչխարներին և աշիերին տրվում է կամֆորի յուղ՝ 0,5 գրամ, սրական յերեք անգամ, գլաուբերջան աղ՝ 50—60 գրամ:

Բացի բուժումից, պիրոպլազմոզի դեմ պայքարելու գործում հիմնական դեր են կատարում ընդհանուր նախազգուշական ձեռնարկումները:

Յեթե տեղերում կան տիգերով վարակված արոտավայրեր, այդ դեպքում, անասնաբուժի ցուցմունքով պետք է կազմակերպել նրա մաս-մաս ոգտագործումը: Նախորք պետք է լսվ ուսումնասիրված լինեն տեղի պայմանները յեւ տիգերի կենցաղը:

Վերևում ասացինք, վոր բացի ըծաանի կենդանիներից, տիգերի տարածման գործում պակաս դեր չեն խաղում նաև քոչվորները, վայրի կենդանիները յեւ թռչունները: Այս հանգամանքը պետք է նկատի առնել պայքարի ընթացքում:

Վորոշված արոտավայրը բաժանում են 4—5 մասի՝ այն հաշվով, վոր յուրաքանչյուր հողամաս ոգտագործվի անասունների կողմից 10 ամսից հետո. այ-

սինքն՝ յեթե անցյալ տարի հողամասն ոգտագործվել է հուլիսին, այս տարի նա պետք է ոգտագործվի մայիսին Այս ձևի պայքարի նպատակն է՝ վոչնչացնել տիգերին քաղցի միջոցով:

Կենդանիների տեղափոխումներն իրենց մշտական միջավայրից դեպի ամառվա արոտները—յայլադները և վերադարձը առևն, պետք է կազմակերպել այնպես, վոր նրանք իրենց հետ, իրենց կաշվի վրա չտեղափոխեն տիգեր: Կենդանիները ճանապարհելուց առաջ, ուշի-ուշով պետք է ստուգել, թե արդոք նրանց վրա չկան տիգեր: Յեթե կան, պետք է խնամքով մաքրել մինչև վերջին տիգը—թե խողորները, թե վոքրերը: Նրանց հեշտ և պոկելը, յեթե կենդանուն պոակեցնենք մեջքի վրա: Տիգերը շատ են սիրում կոչել կենդանու աղբերին, վզին և մարմնի այլ մասերին: Հավաքած տիգերին պետք է անպայման վոչնչացնել:


Մեր այն դաշտավայրերում, վորտեղից պարբերաբար անասուններին սար են քշում, տիգերի մաքրելը ցանկալի յի կատարել այն ժամանակ, յերբ այդ վայրերում տիգերը նոր են սկսում գարթնել: Այդպես ել կատարել կենդանիների վերադարձին—յերբ բնութեյան մեջ ել հանդես չեն գալիս տիգերը, աշնան և ձմրան անբարենպաստ յեղանակների պատճառով:

Ինտենսիվ կուլտուրաներով (բամբակ, ծխախոտ, առվույտ և այլն) զբաղված հողամասերն ստեղծում են տիգերի գարգացման համար աննպաստ պայմաններ:

Տիգերի վոչնչացման գործում մեծ դեր է խաղում անասուններին լողացնելը հատուկ ավազանում. 10 լիտր ջրի մեջ լուծում են—մկնդեղային նատր՝ 32 գրամ (50 % AS₂O₃), կանոն ստպոն՝ 14 գրամ, նավթ՝ 50

գրամ, կամ թե միմիայն մկնդեղային լուծույթով: Այս հեղուկն սպանիչ կերպով և ազդում տիգերի վրա (10 լիտր ջրին 32 գրամ):

Պայքարի այս ձևը շաղկապված և արտավայրերի ոգտագործման սխառմի հետ, վորը թե մեզ մոտ և թե ուրիշ յերկրներում ավել և փայլուն արդյունք: Վորոզ գրական հետևանք և ստացվում, յերբ տիգերով



Նկ. № 3 Անասուններին լողացնելը.

ծածկված անասուններին քսում կամ նրանց մաքմի վրա սրսկում են վերոնշիջյալ ձևով պատրաստված հեղուկը:

Հակատիգային ավազանները ցանկալի յե կառուցել ջրի մոտ, կարճր՝ ամուր հողամասերում և խուսափել ճահճային տեղերից:

Ավազանը պետք և ունենա տախտակե դռներէց ծածկոց, վորպեսզի ավազանի միջի լուծույթը պաշտպանվի գողոչխցումից և անձրևներից:


Ավազանի լողարանային մասը կարելի յե պատրաստել քարից, աղյուսից, յերկաթ-բետոնից, անպայման քսելով ներսի մակերևույթը ցեմենտի շաղախով կամ ձյութած փայտե տախտակներից:

Հակատիգային ավազան պատրաստելիս պետք և նկատի ունենալ հետևյալ չափերը:

Լայնությունը՝ մինչև լուծույթի մակերևույթը	1,4	մետր
Լայնությունը՝ հասակում	0,6	»
Խորությունը՝ մինչև լուծույթի մակերևույթը	1,85	»
Ավազանի պատերի բորձրությունը՝ լուծույթի մակերևույթից	0,5	»
Հատակի յերկարությունը (հորիզոնական դժով)	7,0	»
Յելքի յերկարությունը (հորիզոնական հարթապատկերը)	6,0	»
Մուտքի յերկարությունը (45 ⁰ անկյունաչափ հորիզոնական հարթապատկերով սայթաքման հրապարակը)	1,0	»
Յերկաթ-բետոն ավազանի պատի հաստությունը	0,2	»
Աղյուսի ավազանի պատի հաստությունը	1	աղյուս
Փայտե ավազանի պատի հաստությունը	5	սանտ.

Տիգերի դեմ պայքարելու ամենալավ միջոցներից
 և համարվում մկնդեղային աղից (նատրից) պատ-
 րաստված լուծույթը ջրի մեջ, իր 16% անջուր (ան-
 հիգրիզ) մկնդեղային աղի քանակությամբ:

Վերջը դեպքերում այս ստանդարտ լուծույթին ավելացնում են կանաչ սապոն, նավթ հետեյալ հարա-
 բերությամբ.




Նկ. № 4. Արսիկի մեքենա—Տրեմա.
 Մկնդեղային աղ (50% պարունակութ.) 32 գր.
 Կանաչ սապոն 14 գր.
 Նավթ 50 »


Ջուր 10 լիտր.
 Ավազանի արտադրողականությունն որվա մեջ
 փոփոխական է, նայած անասունների քանակին և յե-
 դանակի դրության:

Ընդհանրապես, միջին թվով 200 գլխից բաղկա-
 ցած նախրի լողացնելը իլում է մի ժամ ժամանակ,
 չհաշվելով նրանց դաշտից քիչ բերելը և հետ տանե-
 լը: Սյսինքն՝ կենդանին ավազանում անց է կացնում
 20 վայրկյան, իսկ մի կենդանու վրա ծախսվում է մի-
 ջին թվով 2,5—3 լիտր լուծույթ:


2858 1006
 28653



Նկ. № 5. Արսիկի մեքենա—Չոմոն.
 Ուրեմն, յերբ ավազանով անցնում է 5000-8000
 գլուխ անասուն, պետք է ավազանի միջի լուծույթը



փոխել, վորովհետև նա անպետքանում, կեղտոտվում և Տիգերի դեմ պայքարելու ձևերից մեկն է՝ տիգոտ անասուններին արտաքինից սրսկել վերոհիշյալ հակա-տիգային լուծույթով, մեղ բոլորիս հայտնի, այգեգործ-ծաթյան մեջ գործածվող սրսկիչ մեքենաներով,—«Պո-ման», «Եկոնոմ», «Ավտոմակ», «Տրեմաս» սխեմանե-րի կամ սովորական ջրսրսկիչով (գլխորպուլտով),




Նկ. 6 «Ավտոմակ»

Այս ձևի սրսկման համար անհրաժեշտ է պատ-րաստել համապատասխան գազգյան՝ անասուններին մեջն առնելու համար կամ նրանց կապել այնպես, վոր անասունը չկարողանա շարժվել տեղից:

Յեթե անասունթյունը հնարավորություն չի ու-նենում անասուններին լողացնել և սրսկել հակա-տիգային հեղուկով, յեղնելով տեղի ու նման այլ պայ-

մաններից, նա կարող և այդ լուծույթը քսել անասուն-ներին:


Մեր բամբակացան շրջաններում, վորտեղ անա-սունների դողերոցքն ավելի հաճախակի յե, իսկ մյուս կողմից ել՝ արատավայրերի պահասություն և զգաց-վում, ցանկալի յե կենդանիներին պահել բնակարան-



Նկ. 8 Կենդանիների սրսկումը:

ներում և դուրս չթողնել դաշտ արածելու: Այս դեպ-քում պետք է ել ավելի խիստ հետևել, վորպեսզի թարմ խոտի, կանաչ ճյուղերի և արիչ կենդանիների միջոցով արիչը ներս չբերվին:

Այն անասունթյունները, վորոնք անհրաժեշտ են գանում պահել աղնվացեղ անասուններ, ցանկալի յե ձեռք բերել նրանց մատողջ հասակից, տարվա այն յեղանակին, յերբ չեն դարձնում տիգերը: Պետք է ա-սել, վոր մատղաշներն ավելի թեթև ևն անցկացնում հիվանդությունները և հետագայում ել չեն հիվանդա-նում դողերոցքով:



« Ազգային գրադարան



NL0289254

8659

ԳԻՆԸ 30 Կ.



Մ. ԱՄԱՆԻԱՆ

Սիրաբանություն